



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**CONTENT**

**ՆԱԽԱԲԱՆ** ..... 2

**PREAMBLE**..... 2

**1. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ** ..... 2

**1. SUBJECT OF THE SERVICE PROVISION AGREEMENT** ..... 2

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** ..... 3

**2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES** ..... 3

**3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ** ..... 4

**3. PRICE OF THE AGREEMENT, PRICE OF THE SERVICES AND PAYMENT PROCEDURE** ..... 4

**4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ** ..... 5

**4. LIABILITY OF THE PARTIES** ..... 5

**5. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ** ..... 6

**5. FORCE MAJEURE** ..... 6

**6. ԶԲԱՑԱԴԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**..... 6

**6. CONFIDENTIAL INFORMATION** ..... 6

**7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**..... 7

**7. OTHER CONDITIONS**..... 7

Գործողության վայր/ Place of scope: ԳՅ, ք. Երևան/ Yerevan, RA  
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021

<b>ՆԱԽԱԲԱՆ</b>	<b>PREAMBLE</b>
<p>Համագործակցության սույն ընդհանուր պայմանները (այսուհետ՝ <b>Պայմաններ</b>) կարգավորում են «<b>ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈՒԹԼԻՆԳ ԶԱՍՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ</b>» ՓԲԸ-ի (այսուհետ՝ <b>Պատվիրատու</b>) և ծառայություններ մատուցողների (այսուհետ՝ <b>Կատարող</b> կամ <b>Կատարողներ</b>) միջև համագործակցությունը,</p>	<p>These general terms of cooperation (hereinafter referred to as the <b>Terms</b>) govern the rules of the “<b>COCA-COLA HELLENIC BOTTLING COMPANY ARMENIA</b>” CJSC’s (hereinafter referred to as the <b>Customer</b>) interaction with service providers (hereinafter referred to as the <b>Executor or Executors</b>),</p>
<p>հետագայում առանձին հիշատակման ժամանակ այսուհետ՝ <b>Կողմ</b>, կամ ինչպես սահմանված է վերը, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ <b>Կողմեր</b>:</p>	<p>hereinafter separately referred to as the <b>Party</b>, or as defined above, together referred to as the <b>Parties</b>.</p>
<p>Պայմանագրերը (առկայության դեպքում), ներառյալ բոլոր հավելվածները, լրացուցիչ համաձայնագրերը, կից փաստաթղթերը, տեխնիկական բնութագրերը, գծագրերը, նշումները, գնման պատվերը և այլ տեղեկություններ, ինչպես նաև Պայմանները միասին ներկայացնում են Պատվիրատուի և Կատարողի միջև գործարքի ամբողջ շրջանակը պայմանագրի պայմանների վերաբերյալ, որի առարկան նշված է պատվերում և (կամ) պայմանագրում:</p>	<p>Agreements (if any), including all annexes, additional agreements, attachments, technical specifications, drawings, notes, purchase order and other information, as well as the Terms together represent the full scope of agreements between the Customer and the Executor regarding the terms of the agreement, the subject of which is indicated in the order and/or agreement.</p>
<p>Եթե առկա են հակասություններ գրավոր պայմանագրի և/կամ Պայմանների միջև, փաստաթղթերը գերակայում են հետևյալ կարգով.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. գրավոր պայմանագիր</li> <li>2. Պայմաններ</li> </ol>	<p>If there are disagreements between the terms of the written agreement and/or the Terms, the documents shall prevail in the following order:</p> <ol style="list-style-type: none"> <li>1. written agreement</li> <li>2. Terms</li> </ol>
<p><b>1. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՒՐԿԱՆ</b></p>	<p><b>1. SUBJECT OF THE SERVICE PROVISION AGREEMENT</b></p>
<p><b>1.1.</b> Ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Պայմանագիր) Կատարողը պարտավորվում է մատուցել Պատվիրատուին Պայմանագրի համապատասխան հավելվածով սահմանված ծառայություններ, այսուհետ՝ <b>Ծառայություններ</b>, սույն Պայմաններով, Պայմանագրով, համապատասխան հավելվածով, ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, կիրառելի ստանդարտներով նախատեսված պայմաններով և կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների դիմաց՝ սույն Պայմաններով, Պայմանագրով և համապատասխան հավելվածով նախատեսված պայմաններով և կարգով:</p>	<p><b>1.1.</b> Based on the service provision agreement (hereinafter referred to as the Agreement) the Executor undertakes to provide to the Customer services defined by the respective annex to the Agreement, hereinafter referred to as the <b>Services</b>, in accordance with terms and conditions defined by this Terms, Agreement, relevant annex, RA legislation and other legal acts, applicable standards, and the Customer is obliged to pay for the properly provided Services according to the terms and conditions defined by this Terms, Agreement and relevant annex.</p>
<p><b>1.2.</b> Պայմանագրի հիման վրա մատուցվող Ծառայությունների մանրամասն նկարագրությունը, գինը, ծավալը, ժամկետները, պայմանները, Ծառայությունների մատուցման վայրը և այլ անհրաժեշտ տվյալներ սահմանվում են Պայմանագրի համապատասխան հավելվածներով: Պայմանագրի բոլոր հավելվածները կցվում են Պայմանագրին և հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:</p>	<p><b>1.2.</b> Detailed description, price, volume, provision period, conditions of the Services being provided based on the Agreement, as well as place of Service provision and other necessary data are being defined by relevant annexes of the Agreement. All annexes of the Agreement are attached to the latter as integral part.</p>
<p><b>1.3.</b> Կողմերն ընդունում են, որ Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրի համապատասխան հավելվածի հիման վրա մատուցվելից Ծառայություններից՝ այդ մասին տեղեկացնելով Կատարողին գրավոր կամ էլեկտրոնային կամ Կողմերի</p>	<p><b>1.3.</b> The Parties accept, that the Customer is entitled to reject the Services to be provided according to the relevant appendix of the Agreement, notifying about it in written or via e-mail or by other way mutually agreed between the Parties to the Executor. In case of rejection of the Services or part of the</p>

<p>միջև փոխահամաձայնեցված այլ եղանակով: Սույն կետով նախատեսված կարգով Պատվիրատուի կողմից համապատասխան հավելվածով նախատեսված Ծառայություններից կամ դրանց մի մասից հրաժարվելու դեպքում՝ համապատասխան Ծառայությունները չեն մատուցվում կամ մատուցվում են մասամբ: Սույն կետով սահմանված իրավունքից Պատվիրատուի կողմից օգտվելու դեպքում Պատվիրատուի նկատմամբ որևէ տույժ չի կիրառվում:</p>	<p>Services by the Customer as set forth by this clause, relevant Services shall not be provided or shall be provided partially. In case of execution of the right defined by this clause by the Customer no penalty can be applied towards the Customer.</p>
<p><b>1.4.</b> Ծառայությունները համարվում են պատշաճ մատուցված, եթե Կատարողը գործադրել է իր լավագույն ջանքերը և Ծառայությունները մատուցել է ժամանակին, բարձր որակով, ինչպես նաև կատարել է սույն Պայմանագրով, Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ և գործարար շրջանառության սովորույթներով նախատեսված բոլոր անհրաժեշտ և հնարավոր գործողությունները Ծառայությունները լավագույն ձևով և որակով մատուցելու համար: Ծառայությունների պատշաճ մատուցումը հավաստվում է Կատարողի կողմից Պայմանագրի հիման վրա ներկայացված համապատասխան հանձնման-ընդունման ակտը և հարկային հաշիվը Պատվիրատուի կողմից հաստատելով:</p>	<p><b>1.4.</b> The Services deemed to be provided properly, if the Executor executed its best efforts and has provided the Services on time, with high quality, as well as has performed all necessary and possible actions set forth by this Terms, Agreement, RA legislation and business practice to provide the Services with best manner and quality. Proper provision of the Services is being confirmed via approving by the Customer of relevant acceptance act and invoice represented by the Executor based on the Agreement.</p>
<p><b>2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b></p>	<p><b>2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES</b></p>
<p><b>2.1. Պատվիրատուն իրավունք ունի.</b></p>	<p><b>2.1. The Customer is entitled:</b></p>
<p><b>2.1.1.</b> Պահանջել Կատարողից պատշաճ կերպով իրականացնել Ծառայությունների մատուցումը.</p>	<p><b>2.1.1.</b> to request from the Executor to perform the Services' provision properly;</p>
<p><b>2.1.2.</b> ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների որակն ու ընթացքը, առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.</p>	<p><b>2.1.2.</b> to check at any time the quality and process of provision of Services by the Executor, without interfering with the activity of the latter;</p>
<p><b>2.1.3.</b> Ցանկացած ժամանակ վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը: Պատվիրատուի կողմից սույն կետով սահմանված իրավունքի իրականացման համար նախնական ծանուցման որևէ ժամկետ չի սահմանվում, ինչպես նաև սույն կետով սահմանված իրավունքի իրականացման հետևանքով հավելյալ որևէ պահանջ Պատվիրատուին չի կարող ներկայացվել:</p>	<p><b>2.1.3.</b> At any time unilaterally to terminate prematurely the Agreement. For execution of the Customer's right defined in this clause no prior notification period is defined, and no additional demand can be presented to the Customer resulted by execution of the right defined by this clause.</p>
<p><b>2.2. Պատվիրատուն պարտավոր է.</b></p>	<p><b>2.2. The Customer is obliged:</b></p>
<p><b>2.2.1.</b> սույն Պայմանագրով, Պայմանագրով սահմանված կարգով ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները.</p>	<p><b>2.2.1.</b> to accept properly provided Services in accordance with this Terms and Agreement;</p>
<p><b>2.2.2.</b> սույն Պայմանագրով, Պայմանագրով սահմանված կարգով վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների համար:</p>	<p><b>2.2.2.</b> to pay for properly provided Services in accordance with this Terms and Agreement.</p>
<p><b>2.3. Կատարողն իրավունք ունի.</b></p>	<p><b>2.3. The Executor is entitled:</b></p>
<p><b>2.3.1.</b> Պահանջել Պատվիրատուից վճարել սույն Պայմանագրով, Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով.</p>	<p><b>2.3.1.</b> to request from the Customer to make payments as set forth in this Terms and Agreement;</p>

*Գործողության վայր/ Place of scope: ԶԶ, ք. Երևան/ Yerevan, RA*  
*Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021*

<p><b>2.3.2.</b> Վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրն այդ մասին առնվազն 30 (երեսուն) օր առաջ գրավոր ծանուցելով Պատվիրատուին:</p>	<p><b>2.3.2.</b> To terminate the Agreement prematurely, with at least 30 (thirty) days prior written notice to the Customer.</p>
<p><b>2.4. Կատարողը պարտավոր է.</b></p>	<p><b>2.4. The Executor is obliged:</b></p>
<p><b>2.4.1.</b> Ծառայությունները մատուցել իր ուժերով և ռեսուրսներով, որոնք պետք է համապատասխանեն կողմից ներկայացված պահանջներին.</p>	<p><b>2.4.1.</b> to provide the Services by Executor's own forces and resources, which shall comply with the Customer's requirements;</p>
<p><b>2.4.2.</b> Ծառայությունները մատուցել համապատասխան հավելվածով սահմանված պայմաններով և ժամկետներում:</p>	<p><b>2.4.2.</b> to provide the Services with conditions and within the period defined by the respective appendix;</p>
<p><b>2.4.3.</b> Ծառայությունները մատուցել բարձր որակով, ժամանակին և Պատվիրատուի պահանջներին, սույն Պայմաններին և Պայմանագրին համապատասխան՝ դրանք հարմարեցնելով Պատվիրատուի կարիքներին.</p>	<p><b>2.4.3.</b> to provide the Services with the high quality, on time and in accordance with the Customer's requirements, this Terms and Agreement - adapting them to the Customer's needs;</p>
<p><b>2.4.4.</b> ձեռնարկել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ և հնարավոր բոլոր միջոցները, որոնց կատարման պարտականությունը նախատեսված է սույն Պայմաններով, Պայմանագրով, ԶԶ օրենսդրությամբ, գործարար շրջանառության սովորույթներով և այլ իրավական ակտերով:</p>	<p><b>2.4.4.</b> To undertake all required and possible measures for the Services' provision, execution obligation of which is set forth by this Terms, Agreement, RA legislation, business practice and other legal acts.</p>
<p><b>3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ</b></p>	<p><b>3. PRICE OF THE AGREEMENT, PRICE OF THE SERVICES AND PAYMENT PROCEDURE</b></p>
<p><b>3.1.</b> Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է Պայմանագրի հիման վրա Պայմանագրի գործողության ողջ ընթացքում մատուցված Ծառայությունների գինը:</p>	<p><b>3.1.</b> The total price of the Agreement makes the total price of the Services being provided based on the Agreement within whole duration of the Agreement.</p>
<p><b>3.2.</b> Պայմանագրի համապատասխան հավելվածի հիման վրա մատուցվող Ծառայությունների գինը սահմանվում է սույլալ հավելվածով:</p>	<p><b>3.2.</b> Price of the Services being provided based on the relevant appendix of the Agreement shall be defined by that appendix.</p>
<p><b>3.3.</b> Պայմանագրի համապատասխան հավելվածով սահմանված Ծառայությունների գինը Պատվիրատուի կողմից վճարվում է Կատարողին՝ մատուցված Ծառայությունների համար Կատարողի կողմից ներկայացված համապատասխան հարկային հաշվի հիման վրա՝ այն Պատվիրատուի կողմից հաստատելուց հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում, որը համապատասխանում է Պատվիրատուի վճարումների օրացույցին, եթե այլ բան սահմանված չէ համապատասխան հավելվածով:</p>	<p><b>3.3.</b> Price of the Services defined by respective appendix of the Agreement shall be paid by the Customer to the Executor based on the relevant invoice presented by the Executor for provided Services, within 60 (sixty) days after approval of mentioned invoice by the Customer, which corresponds to the Customer's payment calendar, if otherwise is not defined by the respective annex.</p>
<p><b>3.4.</b> Այն դեպքում, երբ Ծառայությունը չի մատուցվում ամբողջությամբ կամ պատշաճ կարգով, ինչպես նաև եթե դրա հիման վրա կամ Կողմերի համաձայնությամբ կամ սույն Պայմաններով, Պայմանագրով կամ ԶԶ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում, Պատվիրատուն հրաժարվում է Պայմանագրի առարկայի մի մասից, համապատասխան հավելվածով սահմանված Ծառայությունների գինը ենթակա է համամասնորեն նվազեցման: Նվազեցված գնի՝ նախապես վճարված լինելու դեպքում նվազեցված մասը Կատարողը պարտավոր է վերադարձնել Պատվիրատուին, վերջինիս</p>	<p><b>3.4.</b> If the Service is not provided fully and duly, as well as if based on the latter or mutual agreement of the Parties or in the cases defined by this Terms, Agreement or RA legislation the Customer rejects subject of the Agreement partially, the price of the Services shall be subject to be reduced proportionally. In case if the reduced price has been paid already, the Executor shall return it to the Customer within 5 (five) working days after receipt of such request from the Customer.</p>

<p>կողմից վերադարձման պահանջը ստանալու պահից՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:</p>	
<p><b>4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ</b></p>	<p><b>4. LIABILITY OF THE PARTIES</b></p>
<p><b>4.1.</b> Սույն Պայմաններով, Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով Ծառայությունները Կատարողի կողմից չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու, թերությանը կամ ոչ լրիվ ծավալով մատուցելու կամ սույն Պայմաններին, Պայմանագրին անհամապատասխան մատուցելու դեպքում Պատվիրատուն, իր հայեցողությամբ, իրավունք ունի Կատարողին ներկայացնել ներքոնշյալ կետերում սահմանված պահանջները միասին կամ առանձին.</p>	<p><b>4.1.</b> In case the Services provided with breach of the terms and conditions of this Terms, Agreement or if they are provided improperly, with deficiency or in partial or not in line with this Terms, Agreement, the Customer, on its own discretion, shall have the right to present to the Executor below mentioned demands altogether or separately:</p>
<p><b>4.1.1.</b> ողջամիտ ժամկետ նշանակել Կատարողի կողմից թերությունները վերացնելու համար կամ պահանջել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետներում և պայմաններով կրկին մատուցել Ծառայությունը թերի մասով կամ ամբողջությամբ, եթե թերության վերացումը կամ Ծառայությունների կրկին մատուցումը հնարավոր է և դեռ հետաքրքրություն է ներկայացնում Պատվիրատուի համար.</p>	<p><b>4.1.1.</b> to set a reasonable term for the Executor to eliminate the deficiencies or require the latter to provide Service again fully or in the part provided with deficiencies within terms and under conditions acceptable to the Customer, if the latter is still interested in elimination of the deficiencies or provision of the Services again;</p>
<p><b>4.1.2.</b> պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի համապատասխան հավելվածի գնի 0,03%-ի (զրո ամբողջ երեք հարյուրերորդական տոկոսի) չափով տույժ՝ խախտման յուրաքանչյուր օրվա համար, սակայն ոչ ավելի քան Պայմանագրի ընդհանուր գնի 10%-ը (տասը տոկոսը):</p>	<p><b>4.1.2.</b> to require from the Executor to pay a penalty of 0,03% (zero point zero three per cent) of the total price of the respective appendix of the Agreement for each day of breach, but no more than 10% (ten per cent) of the total price of the Agreement.</p>
<p><b>4.2.</b> Կատարողն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում Պայմանագրի հիման վրա Ծառայությունների մատուցման ընթացքում հասցված ցանկացած վնասի համար և պարտավոր է նշված վնասի հատուցման պահանջը Պատվիրատուից ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ամբողջությամբ հատուցել այն Պատվիրատուին:</p>	<p><b>4.2.</b> The Executor bears full responsibility for the damages caused during provision of Services based on the Agreement and is obliged totally to compensate for the damage to the Customer within 5 (five) working days after receiving of such request from the Customer.</p>
<p><b>4.3.</b> Պատվիրատուն իրավունք ունի Կատարողի կողմից Պայմանների կից փաստաթուղթ թիվ 1-ում սահմանված Աշխատանքի անվտանգության, հիգիենայի և բնապահպանական խախտումներ կատարելու դեպքում ծանուցելով Կատարողին խախտման մասին պահանջել վերացնելու խախտումը/խախտումները Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում: Կատարողի կողմից խախտումը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել վճարել տուգանք կատարած յուրաքանչյուր խախտման համար 10 000 (տասը հազար) ՀՀ դրամի չափով: Կատարողի կողմից խախտումը կրկին կատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի առանց նախապես ծանուցելու Կատարողից պահանջել վճարել տուգանք յուրաքանչյուր խախտման համար 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:</p>	<p><b>4.3.</b> In case of Occupational Safety, hygiene and environmental violations set out in attachment № 1 to the Terms, Customer is entitled to notify the Executor of the violation requesting to eliminate the violation/ violations within the time specified by the Customer. If the Executor fails to eliminate the violation within the prescribed period, the Customer shall have the right to require the Executor to pay a fine of AMD 10,000 (ten thousand) for each violation. If the violation is committed again by the Executor, the Customer is entitled to demand a fine of 50,000 (fifty thousand) AMD for each violation without prior notice.</p>
<p><b>4.4.</b> Պատվիրատուի կողմից սույն Պայմաններով, Պայմանագրով սահմանված վճարման ժամկետները</p>	<p><b>4.4.</b> In case the Customer is in breach of the payment terms defined herein and in Agreement, the Executor shall be entitled</p>



<p>խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի պահանջել վճարել տույժ կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ վճարման ենթակա գումարի 0,03% (զրո ամբողջ երեք հարյուրերորդական տոկոսի) չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 10%-ի (տասը տոկոսի) չափով:</p>	<p>to require from the Customer payment of a penalty of 0,03% (zero point zero three per cent) of the due amount for each day of delinquency, but no more than 10 (ten)% of the due amount.</p>
<p><b>4.5.</b> Սույն Պայմաններով սահմանված, ինչպես նաև Պայմանագրի խախտման դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված տույժերը և տուգանքները ենթակա են վճարման խախտող Կողմի կողմից համապատասխան ծանուցումը ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p><b>4.4.</b> The fines and penalties defined herein, as well as defined by the RA legislation for cases of breach of the Agreement, are subject to be paid within 5 (five) banking days upon receipt of the relevant notice by the breaching Party.</p>
<p><b>5. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ</b></p>	<p><b>5. FORCE MAJEURE</b></p>
<p><b>5.1.</b> Կողմերն ազատվում են սույն Պայմաններով, Պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) ազդեցության հետևանքով, որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, հաղորդակցման ուղիների խափանումը, կառավարական մարմինների ակտերը, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:</p>	<p><b>5.1.</b> The Parties shall be exonerated from liability for non-execution or incomplete execution of the obligations envisaged hereby, if it is the result of force-majeure, which has arisen after signing of this Terms, Agreement and which the Parties could not foresee and prevent. Such situations are earthquakes, inundation, fire, war, declaration of state of emergency or martial law, political disturbances, failure of communication services, governmental bodies' acts, which make impossible the execution of the obligations envisaged hereby.</p>
<p><b>5.2.</b> Եթե ֆորս մաժորի ազդեցությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանիորեն հրաժարվել Պայմանագրից՝ նախապես այդ մասին ծանուցելով մյուս Կողմին:</p>	<p><b>5.2.</b> If the force majeure continues more than 3 (three) months, each Party shall have the right to terminate the Agreement with a prior notice to the other Party.</p>
<p><b>6. ԶԲԱՑԱԶԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b></p>	<p><b>6. CONFIDENTIAL INFORMATION</b></p>
<p><b>6.1.</b> Պայմանագրի հիման վրա կամ Պայմանագրի գործողության ընթացքում կամ սույն Պայմանագրի հիման վրա Ծառայությունների մատուցման ընթացքում բացահայտված Պատվիրատուի գործունեությանը վերաբերող ցանկացած տեղեկատվություն հանդիսանում է չբացահայտված, այսուհետ՝ Չբացահայտված Տեղեկատվություն: Չբացահայտված Տեղեկատվությունը հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը և Պայմանագրով որևէ անձի/մարմնի չի փոխանցվում դրա վերաբերյալ որևէ իրավունք կամ իրավասություն:</p>	<p><b>6.1.</b> Any information related to the activity of the Customer disclosed based on the Agreement or within duration of the Agreement or during Services provision based on the Agreement shall be considered as confidential, hereinafter referred to as the Confidential Information. The Confidential Information deemed to be property of the Customer and no right or authority is being transferred to any person/body.</p>
<p><b>6.2.</b> Կատարողը պարտավորվում է խիստ գաղտնի պահել, որևէ կերպ չկրկնօրինակել կամ չտարածել, ձեռնարկել անհրաժեշտ բոլոր քայլերը պահպանելու համար Չբացահայտված Տեղեկատվությունը:</p>	<p><b>6.2.</b> The Executor undertakes to keep in strict confidence, not to copy or distribute by any way, take all necessary steps to keep the Confidential Information.</p>
<p><b>6.3.</b> Կատարողը պարտավորվում է առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության երրորդ անձանց համար չբացահայտել կամ նրանց այլ կերպ չտրամադրել Չբացահայտված Տեղեկատվությունը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող</p>	<p><b>6.3.</b> The Executor undertakes not to disclose or not to provide to them by any other way Confidential Information to third parties without prior written agreement of the Customer, except the cases defined by the RA legislation. And the Executor undertakes after receipt of demand on disclosure of such</p>

<p>դեպքերի: Իսկ եթե ՀՀ օրենսդրության համաձայն Կատարողը պարտավոր է որևէ կերպ որևէ մեկին տրամադրել Չբացահայտված Տեղեկատվություն, ապա Կատարողը պարտավորվում է նման տեղեկատվության տրամադրման պահանջ ստանալու պահից անմիջապես տեղեկացնել Պատվիրատուին և ՀՀ օրենսդրության սահմաններում ողջամիտ ջանքեր գործադրել սահմանափակելու համար Չբացահայտված Տեղեկատվության տրամադրումը:</p>	<p>information immediately to inform the Customer and take reasonable efforts within the scope of the RA legislation to restrain provision of Confidential Information, if according to the RA legislation the Executor is obliged to disclose by any way to anyone Confidential Information.</p>
<p><b>6.4.</b> Պայմանագրի ժամկետի ավարտից հետո կամ Պատվիրատուի պահանջով, Կատարողը պարտավոր է կյուբական կրիչի վրա Պատվիրատուին վերադարձնել իր տիրապետման ներքո գտնվող ամբողջ Չբացահայտված Տեղեկատվությունը, այդպիսին պարունակող ցանկացած կրիչի բնօրինակ և կրկնօրինակ, ինչպես նաև պարտավոր է ջնջել նշված Չբացահայտված Տեղեկատվությունը բոլոր համակարգչային ծրագրերից, ֆայլերից, այլ աղբյուրներից և ինֆորմացիոն կրիչ սարքերից:</p>	<p><b>6.4.</b> Upon expiration of the Agreement or at the request of the Customer, the Executor shall return to the Customer all the Confidential Information and their copies in its possession in a tangible form, any original and copy of any carrier bearing Confidential Information, as well as shall delete the Confidential Information from all computer programs, files, other sources and information carriers at the request of the Customer.</p>
<p><b>6.5.</b> Կատարողը երաշխավորում է սույն Պայմանների <b>6.1.-6.4.</b> կետերի դրույթների պահպանումը Ծառայություններն անմիջականորեն մատուցող անձանց կամ Ծառայությունների մատուցմանը որևէ կերպ ներգրավված երրորդ անձանց կողմից և Կատարողն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում նրանց կողմից նշված դրույթների ցանկացած խախտման համար:</p>	<p><b>6.5.</b> The Executor warranties keeping of provisions of the clauses <b>6.1.-6.4.</b> herein by the persons immediately executing the Services' provision or by the third parties being anyway involved in the Services' provision, and the Executor bears full liability for any breach of mentioned provision by them.</p>
<p><b>7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</b></p>	<p><b>7. OTHER CONDITIONS</b></p>
<p><b>7.1.</b> Կողմերը երաշխավորում են, որ ունեն սույն Պայմաններով, Պայմանագրով սահմանված իրենց պարտականությունները կատարելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող կամ այլ պայմանների հիման վրա անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:</p>	<p><b>7.1.</b> The Parties warrant that they are in possession of all the documentation required by the RA legislation or based on other conditions to execute their obligations assumed hereunder and by Agreement.</p>
<p><b>7.2.</b> Կողմերը, ինչպես նաև ներքոստորագրյալ անձինք, երաշխավորում և հավաստիացնում են, որ պատշաճ ձևով լիազորված են կնքել Պայմանագիրը և կատարել սույն Պայմաններով և Պայմանագրով սահմանված պարտականությունները:</p>	<p><b>7.2.</b> The Parties, as well as the undersigned persons warrant and certify that they are duly authorised to enter into this Terms and Agreement and execute the obligations, defined hereunder.</p>
<p><b>7.3.</b> Կատարողը երաշխավորում է, որ ունի բավարար ռեսուրսներ և որակավորված աշխատակազմ՝ սահմանված ժամկետում կատարելու Պայմանագիրը և մատուցելու Ծառայությունները:</p>	<p><b>7.3.</b> The Executor warrants that it has enough resources and qualified staff to perform the Agreement and provide the Services within the defined terms.</p>
<p><b>7.4.</b> Կատարողն ինքնուրույն և իր հաշվին է ձեռք բերում Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները, համաձայնությունները, հաստատումները համապատասխան իրավասու պետական կամ տեղական կամ այլ մարմիններից, եթե իր գործունեության իրականացման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվում է նման գործողությունների կատարում:</p>	<p><b>7.4.</b> The Executor shall personally and at its own expense obtain all the permissions, agreement, and confirmations from relevant competent state or local authorities or other bodies, which are necessary for the Services provision, if according to the RA legislation such actions are required for its activity.</p>
<p><b>7.5.</b> Կատարողը ծանոթացել է Պատվիրատուի Գործարար Վարքագծի Կոդեքսին, Կաշառակերության դեմ քաղաքականությանը և Մատակարարների Ուղեցույց Սկզբունքներին, ամբողջությամբ ընդունում է</p>	<p><b>7.5.</b> The Executor has been acknowledged with the Code of Business Conduct, Anti-Bribery policy and Supplier Guiding Principles of the Buyer, fully accepts them and undertakes to act in compliance with them. Reference to the Code of Business</p>

<p>դրանք և պարտավորվում է գործել դրանց համապատասխան: Գործարար Վարքագծի Կողքսին, Կաշառակերության դեմ քաղաքականությանը (հղումը՝ <a href="https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0">https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0</a>) և Մատակարարների Ուղեցույց Սկզբունքներին (հղումը՝ <a href="https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0/_-_-">https://am.coca-colahellenic.com/hy/about-us/_0/_-_-</a>):</p>	<p>Conduct, Anti-Bribery policy (<a href="https://am.coca-colahellenic.com/en/about-us/policies0">https://am.coca-colahellenic.com/en/about-us/policies0</a>) and Supplier Guiding Principles (<a href="https://am.coca-colahellenic.com/en/about-us/policies0/supplier-guiding-principles">https://am.coca-colahellenic.com/en/about-us/policies0/supplier-guiding-principles</a>)</p>
<p><b>7.6.</b> Կատարողն ընդունում է, որ Պայմանագրի ստորագրմամբ որևէ իրավունք չի ստանում այլ անձանց հետ հարաբերություններում Պատվիրատուի ֆիրմային անվանումը կամ ապրանքանիշերն ամբողջությամբ կամ մասնակի օգտագործելու կամ հիշատակելու, ներառյալ, բայց չսահմանափակվելով, Պատվիրատուին որպես գործընկեր հիշատակելու համար: Ցանկացած նման օգտագործում կարող է տեղի ունենալ բացառապես Պատվիրատուի գրավոր թույլտվության հիման վրա:</p>	<p><b>7.6.</b> The Executor accepts, that by signing of the Agreement it is not granted by any right of usage or mentioning of Customer's firm name or brands fully or partially, including, but not limited, mentioning of the Customer as a partner. Any such usage may occur explicitly based on written permit of the Customer.</p>
<p><b>7.7.</b> Սույն Պայմաններով և Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն Էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ Պայմանագրում նշված հասցեներով, եթե Պայմանագրի որևէ այլ կետով այլ բան սահմանված չէ:</p>	<p><b>7.7.</b> All notices of this Terms and Agreement shall be sent by e-mail, fax or written letter, to the addresses defined herein, unless otherwise explicitly defined by another clause of the Agreement.</p>
<p><b>7.8.</b> Կողմերից յուրաքանչյուրը, Պայմանագրով սահմանված իր տվյալների, վավերապայմանների, հասցեների փոփոխման դեպքում, պարտավոր է գրավոր ձևով տեղեկացնել մյուս Կողմին այդ փոփոխության մասին, համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում: Սույն կետով սահմանված պարտականությունը համապատասխան Կողմի կողմից սահմանված ժամկետում չկատարելու դեպքում մյուս Կողմի՝ Պայմանագրում նշված տվյալների օգտագործմամբ բոլոր գործողությունները համարվում են պատշաճ կատարված:</p>	<p><b>7.8.</b> Each from the Parties is obliged to inform in written on changes of its data, requisites, addresses, the other Party, within 7 (seven) days following the respective change. In case of non-execution of the obligation mentioned in this clause by the respective Party, all actions of the other Party using data mentioned in the Agreement shall be deemed to be performed properly.</p>
<p><b>7.9.</b> Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի միջև համաձայնեցված և ստորագրված առանձին գրավոր համաձայնագրով, բացառությամբ օրենսդրությամբ և սույն Պայմաններով սահմանված դեպքերի: Պայմանագրի բոլոր հավելվածները, Կողմերի միջև Պայմանագրի վերաբերյալ կնքված բոլոր համաձայնագրերը և այլ փաստաթղթերը վերջինիս անբաժանելի մասն են կազմում:</p>	<p><b>7.9.</b> The Agreement may be changed or amended only by the separate written agreement aligned and signed between the Parties, except for the cases defined in the legislation and this Terms. All annexes to the Agreement, all agreements and documents executed between the Parties related to the Agreement are deemed to be the integral part hereof.</p>
<p><b>7.10.</b> Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից երկկողմանի ստորագրման և հաստատման պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված ժամկետը ներառյալ, իսկ չկատարված պարտականությունների մասով՝ մինչև Կողմերի կողմից իրենց պարտականությունների լրիվ և ամբողջական կատարումը:</p>	<p><b>7.10.</b> This Agreement shall enter into force upon bilateral signing and approval by the Parties hereof and shall be in force till the date specified in the Agreement inclusive and concerning unfulfilled obligations - till full and complete execution of the obligations by the Parties.</p>
<p><b>7.11.</b> Պայմանագրի որևէ դրույթի/կետի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների/կետերի անվավերության:</p>	<p><b>7.11.</b> If any provision/term of this Agreement is held invalid, such invalidity shall not affect any other provision/term hereof.</p>
<p><b>7.12.</b> Պայմանագրից ծագող և/կամ դրա հետ կապված ցանկացած տարաձայնություն Կողմերի միջև լուծվում են բանակցությունների միջոցով: Կողմերի միջև</p>	<p><b>7.12.</b> Any dispute arising from and/or related to this Agreement shall be solved between the Parties amicably through negotiations. Should the Parties fail to reach Agreement</p>



*Գործողության վայր/ Place of scope: ԶԶ, ք. Երևան/ Yerevan, RA  
Գործում է 01.09.2021 թվականից/ Valid since 01.09.2021*

տարաձայնությունների վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում վեճը ենթակա է լուծման դատական կարգով՝ ԶԶ օրենսդրությանը համապատասխան:	in relation to the dispute, the case shall be solved via judicial proceeding in accordance with the RA legislation.
<b>7.13.</b> Սույն Պայմանների փոփոխման կարգը սահմանված է Կողմերի միջև կնքված Պայմանագրով:	<b>7.13.</b> The procedure for amending these Terms is defined by the Agreement concluded between the Parties.